ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-13-Ը ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Վրաստան (Թբիլիսի) 2019 թվականի փետրվարի 10-ից 13-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Միջազգային էներգետիկ գործակալություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   Մասնակցել Միջազգային էներգետիկ գործակալության EU4Energy ծրագրի կողմից կազմակերպած «էներգաարդյունավետությունը շենքերում և միջսահմանային էներգետիկ ինտեգրման քաղաքականություն» խորագրով ֆորումին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվեցին միջհամակարգային սահմանային առևտրին, ինչպես նաև էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանը վերաբերող հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպումներ տեղի ունեցան ֆորումի կազմակերպիչների հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանին տրամադրվող օժանդակության ձևաչափերը, իսկ հայկական կողմը ներկայացրել է էներգախնայողության և էներգաարդյունավետության ոլորտում իր փորձը և գրանցած հաջողությունները: Տարածաշրջանային համագործակցության առումով նշվեց, որ Հայաստանը կարող է կապող օղակ հանդիսանալ Իրանի Իսլամական Հանրապետության, Վրաստանի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության էլեկտրաէներգետիկական համակարգերի միջև էլեկտրաէներգետիկական համակարգերի առևտրի, տարանցման և փոխհոսքերի համատեքստում:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

   Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետագա համագործակցության համար, ինչպես նաև ապրիլին Փարիզում կայանալիք ղեկավար կոմիտեի նիստի ընթացքում մասնակից երկրներին տրամադրվող աջակցության ծրագրերի շուրջ: Ֆորումի ընթացքում փաստաթղթերի ստորագրում տեղի չի ունեցել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շարունակել համագործակցությունը և հետագա քննարկումների ժամանակ ներկայացնել իրականացված քայլերի արդյունքները:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

15 փետրվարի 2019թ.